

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Լենտեքս ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/21 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
6	<p>Ստորև ներկայացված ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. թիվ 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Սվիտեր (ձմեռային), առավելագույնը՝ 730 հատ (Ձև 14): Պատրաստվում է մուգ կապույտ գույնի բրդյա (50% բուրդ, 50% ակրիլ, 700-800 գր. քաշով) գործվածքից, ուսերը և թևքերի արմուկների մասում պատված են մուգ կապույտ կտորով: Օձիքը՝ շրջանաձև բացվածքով, հավաքովի գործվածքով: Ձախ կրծքավանդակին առկա է շերտակարով, վրադիր կափույրով, կոճկվող գրպան՝ 14,5 X 12 սմ չափսերով: Ունի ուսադիրների համար նախատեսված լեզվակ, իսկ ուսադիրները կտորից են՝ հանովի, մեկ կոճակով կոճկվող: Գրպանի և ուսադիրների լեզվակի կոճակները մետաղական են՝ մուգ կապույտ գույնի: Ձախ թևքին առկա է թևքանշան, իսկ աջ թևքին ՀՀ դրոշ նշված որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան: Ուսադիրների հիմքի գույնը պետք է համապատասխանի սվիտերի գույնին: Յուրաքանչյուր անգամ մատակարարվող ապրանքների համար մատակարարը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Կանացի և տղամարդու սվիտերների քանակները՝ համաձայն ձևավորված պատվերի: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն տեսականու անվանումը, քանակը, չափսերը, ինսամքի վերաբերյալ տեղեկատվությունը:</p>







## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО Лентекс в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом 17-ЕЦДЦПДР-22/21 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
6	